

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

## Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ  
ՄԱՐՄԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021  
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
- 1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՑԸ
- 1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- 1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
- 1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
- 1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ
- 1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ
- 1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ
- 1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- 1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
- 1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
- 1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- 1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
- 2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
- 2.2. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՔԱՌԱՍՅԱ ԾՐԱՔՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
- 3.4. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.5. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
- 3.6. ՏԵՂԵԿԱՎՈՒԹՅՈՒՆ` ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ
4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ
5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀՆԳԱՍՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշենի համայնքի զարգացման ծրագիրը մշակվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Տեղական

ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է համայնքի համալիր զարգացմանն ուղղված ռազմավարական ուղեցույց փաստաթուղթ:

Զարգացման ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության, առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ: Այն նախատեսում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և բյուջետավորման նպատակային գործընթացի իրականացումը: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Այն կարող է հաշվի առնվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության և սահմանամերձ բնակավայրերի զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագրերում:

Ներկայացվող զարգացման ծրագիրը առաջիկա տարիների համար հանդիսանալու է Կապս համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը:

Համայնքի զարգացման ծրագիրը ներկայացնում է Կապս համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ուժեղ և թույլ կողմերը, դասակարգվել են առաջնային և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները, վերլուծվել են համայնքի ֆինանսական, աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսներն ու տնտեսական հնարավորությունները: Առաջադրվել են ծրագրային աշխատանքներ, որոնցում տրվել են առկա հիմնախնդիրների նկարագրությունները, լուծման ուղիները, պահանջվող ֆինանսական միջոցները, ֆինանսավորման աղբյուրները, ակնկալվող արդյունքները, իրականացվելիք ծրագրերի կենսունակության ապահովման հիմնավորումները, ինչպես նաև կատարման ժամկետներն ու պատասխանատուները: Կատարվել են սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են համայնքի ներկա իրավիճակը բնութագրող վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում կախված արտաքին ու ներքին գործոնների ազդեցությունից կարող են ենթարկվել փոփոխությունների ու լրացումների:

Զարգացման ծրագիրը մշակելիս ուսումնասիրվել են նաև Կապս համայնքի նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման միտումները և դրանց շարունակականության հավանականությունը:

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## 1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Մարմաշեն գյուղը հիմնադրվել է 1830թվականին, որտեղ հետագայում բնակություն են հաստատել Արևմտյան Հայաստանից` Բայազետի Տիգոր և Ակրակ Թերջյանի գյուղերից գաղթացները: Սկզբում գյուղացիները բնակվել են ներկայիս Մարմաշենի տարածքից ոչ հեռու գտնվող Մարմաշեն եկեղեցու հարեվանությամբ տարածքում և զբաղվել են անասնապահությամբ և հողագործությամբ: 980 թվականին գյուղն ունեցել է 560, 1890-ական թվականներին` մոտ 1500 բնակիչ:

1937 թվականից բնակիչներն սկսել են տեղափոխվել մոտ 500մ հյուսիս-արևելք :

1961-ական թվականներից արդեն ամբողջ գյուղը բնակվել է այնտեղ:

1924 թվականին սկսել եմ «Շիր ջրանցք»-ի նախապատրաստական աշխատանքները:

Մարմաշենի բնակիչներն մասնակցել են նաև հայրենական մեծ պատերազմին, գյուղում կա նրանց հիշատակը հավերժացնող հուշարձան: Գյուղը ունեցել է 10-ամյա դպրոց, /1998 թվականից երաժշտական դպրոց:

## **1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ՌԵԼԻԵՖԸ**

Մարմաշեն համայնքը գտնվում է մարզկենտրոն Գյումրի քաղաքի արևմտյան մասում, Կապսի ջրամբարի հարևանությամբ իր հողային տարածքով սահմանակից է հարավային մասով Շիրակի մարզի Վահրամաբերդ համայնքի հողատարածքներին, հյուսիսային մասով Հովունիի բնակավայրին հողատարածքներին,

Համայնքի տարածքում տարեկան տեղումների քանակը կազմում է 600-700 մմ: Ամենացածր ջերմաստիճանը եղել է -35°C, իսկ ամենաբարձրը` + 33 °C:

Գյուղն ունի կտրտված ռելիեֆ: Այն ծովի մակերևույթից բարձր է 1660մ:

Բնակլիմայական պայմանները փոփոխական են Կլիման ցամաքային է, դաշտերը հիմնականում ոռոգելի են: Ձմեռը ցուրտ է, բքաշունչ: Ամառը զով է, երբեմն էլ շոգ ու երաշտ: Ոռոգելի վարելահողերը կազմում են 725 հա է:

Տարածքում գերակշռում են սևահողերը: Հարուստ է տուֆ և բազալտ քարով, ավազով ու կավով:

Հողատարածքները մշտապես վտանգված են կարկտահարությամբ: Տարածքը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926 և 1988թթ. աղետալի երկրաշարժերը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1400.0հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր են 1110.28 հա, այդ թվում 725.14 հա վարելահող, 320.34 հա արոտ և 54.7հա գյուղատնտեսական այլ հողատեսքեր: Ջրային ֆոնդի հողերը կազմում են 211.2 հա: Համայնքի կառուցապատված տարածքը զբաղեցնում է 109.6 հա.:

Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 17 կմ, մարզկենտրոնից 7 կմ և մայրաքաղաքից՝ 132 կմ հեռավորության վրա: Բնակավայրի միջով է անցնում Գյումրի-Ամասիա հանրապետական նշանակության ճանապարհը:

### **1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Հայտնի պատմական տեղեկությունների համաձայն գյուղը ձևավորվել է 980-թվականին, հետագայում բնակություն են հաստատել Արևմտյան Հայաստանից՝ Բայազետի Տիգոր և Ակրակ գյուղերից գաղթացները:

Մարմաշեն համայնքի բնակչությունը 01.01.2016թ. դրությամբ կազմում է 2128 մարդ, որից 860-ը՝ տղամարդ, 1168-ը՝ կին:

Վերջին 20 տարիներին համայնքի բնակչության թիվը նվազել է մոտ 110 մարդով, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների թիվը նվազել է կրկնակի չափով և արձանագրվել է բնակչության կազմի ծերացում: Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 40-50 տոկոսը մեկնում են արտագնա սեզոնային աշխատանքի, շարունակվում է հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

#### ***ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ (մարդ)***

***(Տվյալները լրացված են 2017 թ. հունվարի 1-ի դրությամբ)***

- Ընդամենը՝ մշտական բնակչություն -2128,  
Այդ թվում՝ տղամարդ - 960, կին՝ - 1168,
- Տնային տնտեսությունների թվաքանակը – 604,
- Առկա բնակչություն – 2186,
- Առկա տնային տնտեսությունների քանակը – 604,

#### ***Բնակչության բաշխվածությունն ըստ ազգային պատկանելության (առկա բնակչություն)***

- Հայ – 2114,
- Ռուս – 0
- Եզդի – 14

#### ***Բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի (առկա բնակչություն)***

Նախադպրոցական տարիքի երեխաներ / 0 – 6 / - 62,

որից՝ մինչև 1 տարեկան – 8,

1-2 տարեկան – 49,

3-4 տարեկան – 63,

5-6 տարեկան – 59:

- Դպրոցական տարիքի երեխաներ / 7 – 17 տարեկան / - 81,

որից՝ 7-10 տարեկան – 82,

11-14 տարեկան – 61,

15-17 տարեկան – 59:

- Հասուն տարիքի բնակչություն / 18-64 / - 745,

որից՝ 18-22 տարեկան – 92,

23-45 տարեկան – 421,

46-64 տարեկան – 462:

- Տարեց բնակչություն / 65 և ավելի / - 387:

- Համայնքի ընտրողների թիվը - 1463:

***Ծնունդ, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն (վերջին 3 տարիների միջին ցուցանիշ)***

- Ծնունդ - 28,

Որից կենդանի ծնունդ – 28,

- Մահ – ,16

- Ամուսնություն – 12,

- Ամուսնալուծություն – 2:

***Համայնքի սոցիալական խմբերի ներկայացվածությունը***

- Հաշմանդամներ – 68,

այդ թվում կանայք՝ 24 ,

որից՝ հաշմանդամ երեխա – 3,

- Միակողմանի ծնողազուրկ երեխա - 6,

- Ամուսնալուծված անձի երեխա – 5

- Կենսաթոշակառուներ – 392,

- Միայնակ չաշխատող կենսաթոշակառուներ – 6,

- Տարեց կենսաթոշակառուներ /75 տարեկան և բարձր/ - 156,

***Համայնքի տնային տնտեսությունների սոցիալական խմբերի ներկայացվածությունը***

- Երեք և ավելի երեխաներ ունեցող /0-16 տարեկան/ – 32,
- Միայն կենսաթոշակառուներից կազմված /65 և ավելի տարեկան/ - 16,
- Հաշմանդամ երեխա ունեցող – 3,
- Մինչև 6 տարեկան երեխա ունեցող –101
- Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը՝ 63:

### ***ՋԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ***

#### ***Համայնքի բնակչության բաշխումն ըստ զբաղվածության հիմնական ճյուղերի (մարդ)***

- Գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 1931,
- Վարձու աշխատանք գյուղատնտեսական ոլորտում – 11,
- Վարձու աշխատանք ոչ գյուղատնտեսական ոլորտում, մասնավոր – 19,
- Վարձու աշխատանք պետական ոլորտում –41 ,
- Ոչ գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 0,
- Աշակետոյն /16 տարեկան և բարձր/ - 237,
- Ուսանողներ – 42,
- Բանակում ծառայողներ – 16,  
որից պայմանագրային՝ 1,  
պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող՝ 6,
- Չունեն զբաղվածություն /տնտեսապես ոչ ակտիվ/ – 132,

#### ***Համայնքում զբաղվածների բաշխվածությունն ըստ ոլորտների***

- Գյուղատնտեսություն – 1931,
- Հանքագործական արդյունաբերություն – 0,
- Էլեկտրոէներգիայի, գազի ջրամատակարարման ոլորտի սպասարկում – 3,
- Շինարարություն – 6,
- Առևտուր և այլ սպասարկումներ – 5,
- Գյուղատնտեսական ծառայություններ – 10,
- Տրանսպորտ և կապ – 12,
- Տեղական ինքնակառավարում – 11,
- Կրթություն – 37,
- Առողջապահություն և սոցիալական ծառայություններ –7,

- Կոմունալ, անհատական ծառայությունների մատուցում – 1,
- Ոսանողներ, ավարտական դասարանների աշակերտներ, բանակում ծառայողներ - 58:

***Միգրացիա /2016 թվականի ընթացքում/***

- Այլ բնակավայր տեղափոխված ընտանիքների թիվը – 37, որից՝ Հայաստանում այլ բնակավայր՝ 1:
- Արտերկիր՝ 36:
- Մշտական բնակության համար համայնք տեղափոխված ընտանիքների թիվը՝ 3,
- որից Հայաստանի այլ բնակավայրերից՝ 3:
- Արտագ նա աշխատանքի մեկնողների թիվ – 560 170 տնային տնտեսություններից):

***Համայնքի հասուն տարիքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի***

- Տարրական – 23,
- հիմնական –320,
- միջնակարգ -760,
- միջնակարգ մասնագիտական – 158,
- բարձրագ ույն - 170:

**1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և հանայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի /ավագանու 7 անդամ/ և համայնքի ղեկավար: 2016 թ. Հոկտեմբերի 2-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով համայնքի ղեկավար է վերընտրվել Եղոյան Աշոտ:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավարի աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

**Հայեցողական պաշտոն**

Համայնքի ղեկավարի տեղակալ:

**Համայնքային ծառայության պաշտոններ՝**

1. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար – 1 միավոր,



2. գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ – 3 միավոր,

**Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ**

1. Համակարգչի օպերատոր – 1 միավոր,
2. Գրադարանավար – 1 միավոր,
3. Հավաքարար - 1 միավոր,
4. Ծառայողական ավտոմեքենայի վարորդ – 1 միավոր,
5. Հարկային գործակալ 1միավոր
6. Գնումների համակարգող 1միավոր
7. Ցրիչ 1 միավոր

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ**

N	Անուն, ազանուն	Ծննդյան թիվը	Կրթությունը	Կուսակցական պատկանելությունը
1.	Կարեն Արշակյան	1968	Բարձրագույն	ՀՅԴ
2.	Սասուն Եղոյան	1985	Բարձրագույն	անկուսակցական
3.	Արթուր Ենոքյան	1984	Բարձրագույն	անկուսակցական
4.	Կարեն Մկրտչյան	1972	Միջն մասնագիտական	անկուսակցական
5.	Մանվել Պապոյան	1959	Միջն մասնագիտական	անկուսակցական
6.	Մկրտիչ Մակարյան	1988	Բարձրագույն	ԲՀԿ
7.	Հրաչիկ Մխիթարյան	1957	Բարձրագույն	ՀՀԿ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ**

N	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնյին դրույքաչափը	Ազգանուն, անուն	Ծննդյան թիվը	Կրթությունը
<i>Քաղաքական պաշտոն</i>						
1.	Համայնքի ղեկավար	1	290 000	Աշոտ Եղոյան	1957թ.	բարձրագույն

<i>Հայեցողական պաշտոն</i>					
1.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	150000		
<i>Համայնքային ծառայության պաշտոններ</i>					
1.	Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	200000		
2.	Գլխավոր մասնագետ/2.3-1	2	396000		

*Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ*

1	Գնումների համակարգող	1	80000		
2		1	80000		
3	Համակարգչի օպերատոր	1	187500		
4	Գրադարանավար	1	72750		
5	Վարորդ	1	120000		
6	Հավաքարար	1	72751		
7	Ցրիչ	1	72751		
<i>Աշխատակազմի աշխատակիցների քանակը</i>		10 (տաս)			

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում կազմավորվել և գործում են հետևյալ մշտական հանձնաժողովները՝

- Վարչական հարցերի հանձնաժողով,
- Անչափահասների հարցերի հանձնաժողով,
- Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողով,
- Կանանց և երեխաների հարցերի հանձնաժողով,
- արտակարգ իրավիճակներից հետո ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով,

**1.5. ՀԱՄԱՅՄՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի <<Համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին>> թիվ 51 որոշմամբ:

Համայնքի սեփականություն հանդիսացող բոլոր շենքերն ու շինությունները կառուցվել են 1963-2000 թվականներին:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի: Քայքայված և անբարեկարգ վիճակում է գտնվում բաղնիսի շենքերը, որը կառուցման օրվանից մինչև օրս հիմնանորոգման չի ենթարկվել, իսկ մանկապարտեզի և սկուլմբի շենքը գտնվում է անբարեկարգ վիճակում:

Բնակավայրի խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1961 թվականի: Այն ունի 8.0կմ երկարություն:

Համայնքի ոռոգման համակարգը կառուցվել է մասնակիորեն 1996-ական թվականներին և ունի 6.0 կմ ընդհանուր երկարություն: Այն նախատեսված է եղել 756.0 հա վարելահողերի ոռոգման համար: Ցանցի քայքայվածության պատճառով դաշտերի որոշ մասերում ոռոգում չի իրականացվում:

Բնակավայրի կոյուղու համակարգն ունի 1.0 կմ ընդհանուր երկարություն, որը նույնպես գտնվում է քայքայված վիճակում և ունի վերանորոգման կարիք:

Անբարեկարգ և քայքայված վիճակում է գտնվում դաշտամիջյան ճանապարհները 3.0կմ ընդհանուր երկարությամբ, որի առանձին տեղամասերի քայքայվածության պատճառով այն գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել է անանցանելի և լուրջ դժվարություններ է ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ: Համայնքի ուժերով պարբերաբար կատարվել են ներհամայնքային ճանապարհների փոսալցման և խճապատման աշխատանքներ, սակայն այն բավարար համարել չի կարելի:

Համեմատաբար բարվոք վիճակում է մշակույթի տան շենքում գյուղապետարանի կողմից օգտագործվող 6 աշխատասենյակները, որոնք 2010-16 թթ վերանորոգվել է համայնքի բյուջեի միջոցներով: Նորացման և համալրման կարիք ունի գյուղապետարանի և մշակույթի տան գույքը:

Բուժ. կետը 2005 թվականին մասնակիորեն նորոգվել է ԱՄՆ դեսպանության <<ՆՈՎԱ>> ծրագրի և համայնքի կողմից կատարված ներդրումների միջոցով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ**

Հ Հ	Գույքի անվանումը	Չափի միավորը	Քանակ ը	Միավորի արժեքը /դրամ/	Յաջվելը նրդհանուր արժեքը /դրամ/	Գույքի տեխնիկական վիճակի նկարագրությունը
1	Ավտոմեքենա ՎԱԶ-2107	հատ	1	2500000	2500000	սարքին
2	Ավտոմեքենա ԳԱԶ-52	հատ	1	64700	64700	անսարք
3	Էլ. տաքացուցիչ	հատ	1	23000	23000	սարքին
4	Բազկաթոռ	հատ	1	30000	30000	սարքին
5	ԲԱԶԿԱԹՈՌ	հատ	4	20000	80000	
6	Հովանդական տնակներ	հատ	18	133000	2394000	սարքին
7	Հեռախոս	հատ	1	12000	12000	անսարք
8	Համակարգչային տեխնիկա	հատ	2	350000	350000	վթարային
9	պահարան	հատ	1	70000	70000	
10		հատ	1	121578	121578	սարքին
11	Ակումբի շենք 70% վթարային	հատ	1	2875100	2875100	վթարային
12	աթոռ	հատ	12	10800	133000	սարքին
13		հատ	1			սարքին
14	Շերտավարագույր	հատ	5	55000	55000	
15	Համակարգչային տեխնիկա	հատ	1	365000	365000	սարքին
16	Հեռուստացույցի տակդիր	հատ	1	44000	44000	
17		հատ				
18	Երկաթյա կասսա	հատ	2	192000	192000	սարքին
20	համակարգիչ՝ տեխնիկա	հատ	1	365000	365000	սարքին
21	տպիչ Canon MF4010	հատ	1	71725	71725	սարքին

**1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Բնակավայրը մասնակի կոյուղացված է:

Բնակավայրում իրականացվում է կանոնակարգված աղբահանություն: Կենցաղային աղբը համայնքից հեռացվում է գյուղապետարանի կողմից կազմակերպվող աղբահանության միջոցով:

Բնակավայրը չունի համայնքային նշանակության հանգստի գոտի: Հատկապես ամռան ժամանակաշրջանում բարձր է օդի փոշոտվածությունը:

Բնակավայրում վտանգավոր արտանետումներ չկան:

## **1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ**

Համայնքում կա 476 բնակելի տներ՝ 32220 քառ.մ ընդհանուր մակերեսով: Բոլոր բնակելի տները կառուցվել են 1961-2000թթ: Բնակելի տները բոլորը սեփականաշնորհված են և հանդիսանում են համայնքի բնակիչների սեփականությունը: Բնակավայրը գտնվում է 1988թ. Սպիտակի աղետալի երկրաշարժի գոտում: Համայնքի բնակֆոնդի մոտ 50 %-ը ստացել է 3-4 աստիճանի վնասվածություն և նրանց մեծ մասը ենթակա է ուժեղացման ու վերանորոգման:

Համայնքում կա 12 բնակելի տների անավարտ շինարարություն, որոնք ներկայացված են ՀՀ կառավարության բնակարաշինության ցուցակում **1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ**

## **ՋՈՒՐ**

Բնակավայրի խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1961 թվականի: Այն ունի 8 կմ երկարություն: Ջրամատակարարումն իրականացվում է ինքնահոս եղանակով: Համայնքի ոռոգման համակարգը կառուցվել է 1966-ական թվականներին և ունի 3.0 կմ ընդհանուր երկարություն: Այն նախատեսված է եղել 256.0 հա վարելահողերի ոռոգման համար: Ցանցի քայքայվածության պատճառով դաշտերի որոշ մասերում ոռոգում չի իրականացվում:

Բնակավայրի կոյուղու համակարգն ունի 3.0 կմ ընդհանուր երկարություն, որը նույնպես գտնվում է քայքայված վիճակում և ունի վերանորոգման կարիք:

## **1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ**

Անբարեկարգ և քայքայված վիճակում է գտնվում դաշտամիջյան ճանապարհները 3.0կմ ընդհանուր երկարությամբ, որի առանձին տեղամասերի քայքայվածության պատճառով այն գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել է անանցանելի և լուրջ ղժվարություններ է ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ: Համայնքի ուժերով պարբերաբար կատարվել են ներհամայնքային ճանապարհների փոսալցման և խճապատման աշխատանքներ, սակայն այն բավարար համարել չի կարելի:

Համայնքում առկա է բնակիչների սեփականությունը հանդիսացող 215 մարդատար ավտոմեքենա:

Բնակավայրը ապահովված է <<ՎԻՎԱՍԵԼ ՄՏՄ>>, <<ՕՐԱՆԺ>>, <<ԲԻԼԱՅՆ>> բջջային և <<Արմենտելի>> կողմից սպասարկվող ֆիքսված հեռախոսակապով: Ֆիքսված հեռախոսակապով են ապահովված համայնքի 760 տնտեսություններ:

Բնակավայրն ընդունում է 4 հանրապետական և 3 մարզային հեռուստաալիքներ: Ուժեղ է ինտերնետային կապը:

Բնակավայր - մարզկենտրոն տրանսպորտային կապն ապահովվում է միկրոավտոբուսի 2 երթուղիների միջոցով: Մեկ ուղևորի փոխադրավարձը կազմում է 150 դրամ:

Մայրաքաղաքի հետ կապն ապահովվում է Գյումրի-Արմավիր-Երևան երթուղային ավտոբուսների և միկրոավտոբուսների միջոցով:

## 1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է:

Բնակչությունը սերտ կապեր ունի մայրաքաղաքի, մարզկենտրոնի, նախկին շրջկենտրոնի և շրջակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցում է ինչպես հանրապետությունում գործող քաղաքական և հասարակական կազմակերպությունների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ: <ՎՈՐԼԴ ՎԻՇՆ> հասարակական կազմակերպություն

Համայնքն անդամակցում է <<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միությանը, համագործակցության կապեր ունի <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման>> ծրագրի, <<Հայաստան համահայկական հիմնադրամի>>, <<Սոցիալական ներդրումների հիմնադրամի>>, <<Գյուղական բարեփոխումների աջակցության ծրագրի>>, ՄԱԿ-ի ՀՊԾ <<Սնունդ աշխատանքի դիմաց>> ծրագրի, <<Շիրակ հասարակական կազմակերպությունների միություն>> ՀԿ-ի, <<Շիրակի հասարակական կազմակերպությունների միություն>> ՀԿ-ի, ներդրումային այլ կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

Հոգևոր ոլորտում համայնքը համագործակցում է Շիրակի Առաջնորդարանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

## 1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1407 հա, որից՝

1. գյուղատնտեսական նշանակության հողեր – 1110 հա,

այդ թվում՝

- վարելահողեր – 725.65 հա,

այդ թվում՝

սեփականաշնորհված – 749 հա,

համայնքային սեփականության – 438.4 հա,

- արոտներ – 320.3 հա.

- այլ հողատեսքեր – 54.75 հա:

Վարելահողերի մեկ հեկտարից ստացվող զուտ եկամտի կադաստրային միջին գնահատականը կազմում է 25300 դրամ, իսկ արոտների՝ 10700 դրամ:

Սեփականաշնորհված վարելահողերի մեկ հողաժնի չափը կազմում է 0.6 հա.

2. Բնակավայրի հողեր – 136.33 հա.

3. Արդյունաբերական, արտադրական նշանակության հողեր 14.32 հա.

4. Անտառային հողեր -12.8 հա

5. Ջրային ֆոնդի հողեր -32.5հա.

6. Հատուկ նշանակության հողեր – 59.4 հա.

### ***1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ***

Գյուղատնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը հացահատիկային կուլտուրաների մշակությունն ու անասնապահությունն են: Ոռոգման ջրի, բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն և այլն/ և հակակարկտային կայանքների բացակայության պատճառով համայնքի գյուղացիական տնտեսությունները լուրջ դժվարությունների առաջ են կանգնած գյուղատնտեսական մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու և բարձր բերքատվություն ապահովելու համար:

Համայնքում կազմավորված են 600 գուղացիական տնտեսություններ, որոնց կողմից մշակվում է 725 հա վարելահող և օգտագործվում 320 հա արոտ: Համայնքի տնտեսությունների սեփականությունն է հանդիսանում 725 հա վարելահող, իսկ թվով 45տնտեսությունների կողմից օրենքով սահմանված կարգով վաճակալված է 54.2 հա վարելահող: Համայնքում վարելահող չունեցող տնտեսություններ չկան:

Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի, մասամբ կարտոֆիլի, կաղամբի և բանջարաբուստանային այլ կուլտուրաների մշակությամբ: Գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետությունը ուղղակիորեն կախված է բնակլիմայական պայմաններից: Ցանկատարածությունները մշտապես վտանգված են երաշտով, ցրտահարությամբ և կարկտահարությամբ: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 25-30 ցենտներ, իսկ երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կարող է կազմում է 50-100%: Բուսաբուծության զարգացմանը մեծապես խոչընդոտում է ռոտզման համակարգի քայքայվածությունը, լավորակ սերմերի բացակայությունը, գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների մաշվածությունն ու պակասը, դիզելային վառելանյութի, պարարտանյութերի և թունաքիմիկատների բարձր գները:

Բուսաբուծության բնագավառում վերջին 10 տարիներին արձանագրվել է հացահատիկի և կարտոֆիլի արտադրության ծավալների նվազում:

Գյուղացիական տնտեսությունների կողմից պահվում է 1005 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում կովեր՝ 429 գլուխ, ոչխարներ և այծեր՝ 120 գլուխ, խոզեր 33 գլուխ: Առանձին տնտեսություններ զբաղվում են նաև թռչնաբուծությամբ /հավեր՝ 2270 թև/ և մեղվապահությամբ /120 մեղվաընտանիք/:

Անասնապահության բնագավառում վերջին 10 տարիներին համայնքում արձանագրվել է մսի և կաթի արտադրության ծավալների ավելացում:

Գյուղում կա 10 տրակտոր, , 14 բեռնատար ավտոմեքենա, տասնյակ գյուղատնտեսական գործիքներ ու մեխանիզմներ:

Գյուղտնտեսական մեքենաներն ու մեխանիզմները բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա գյուղատնտեսական տեխնիկայի և պահեստամասերի մեծ պահանջարկ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

**1. Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը**

Հողատեսքի անվանումը	2016թվական	
	Քանակը /հա/	Որից օգտագործվում է /հա/
Ընդամենը գյուղտնտեսական նշանակության հողեր, որից՝	110.35	110.35



Վարելահող	725.3	725.3
Բազմամյա տնկարկներ	0.0	0.0
Խոտհարքներ	9.6	9.6
Արոտավայրեր	320.3	320.3
Այլ գյուղատնտեսական հողեր	54.7	0.0

**2. Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը**

	Ցանկատարածությունների կառուցվածքը	2016 թվական		% -ը վարելահողերի ընդհանուր քանակի նկատմամբ /
		Քանակը /հա/	Մեկ հեկտարից ստացվող միջին բերքը /բերքատվություն/ տոննա	
<b>1.</b>	<b>Ընդամենը հացահատիկային մշակաբույսեր, այդ թվում՝</b>	<b>420.0</b>	<b>3.0</b>	<b>40.6</b>
	Ցորեն	300.0	3.0	20.0
	Գարի	120.0	3.0	20.6
	Այլ հացահատիկային մշակաբույսեր	0.0	0.0	0.0
<b>2.</b>	<b>Ընդամենը կերային մշակաբույսեր, այդ թվում՝</b>	<b>171.0</b>	<b>3.0</b>	<b>17.8</b>
	Կորնզան	85.0	6.0	9.3
	Առվույտ	86.0	6.0	8.5
<b>3.</b>	<b>Ընդամենը բանջարաբոստանային մշակաբույսեր, այդ թվում՝</b>	<b>47.0</b>	<b>27.6</b>	<b>11.8</b>
	Կարտոֆիլ	96.0	20.0	X
	Կաղամբ	0.0	0.0	X
	Գազար	1.0	3.0	X
	Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր	2.0	20.0	X
<b>5.</b>	<b>Զմշակվող վարելահողեր</b>	<b>65.2</b>	<b>0.0</b>	<b>11.1</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>X</b>	<b>X</b>

**3. Հիմնական մշակաբույսերի միջին համախառն բերքը /բերքատվություն/**

Մշակաբույսի տեսակը	2016 թվական
--------------------	-------------

<b>Հացահատիկ</b>	
Ցանկատարածքը /հա/	420.0
Համախառն բերքը/տոննա/	1260
<b>Կերային մշակաբույսեր</b>	
Ցանկատարածքը	171.0
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	6.0
Համախառն բերքը/տոննա/	1026.0
<b>Կարտոֆիլ</b>	
Ցանկատարածքը	96.0
1 հեկտարի միջին բերքատվությունը/տոննա/	20.0
Համախառն բերքը/տոննա/	1920.0
<b>Կաղամբ</b>	
Ցանկատարածքը	0.0
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	0.0
Համախառն բերքը/տոննա/	0.0
<b>Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր</b>	
Ցանկատարածքը	1.0
1 հեկտարի միջին բերքատվությունը/տոննա/	2.0
Համախառն բերքը/տոննա/	2.0

#### 4. Անասնազրկաբանակը

Գյուղատնտեսական կենդանիների տեսակները	/գլուխ/ 01.01.2016թ. հաշվառման տվյալներով
Խոշոր եղջերավոր անասուններ	1005
որից՝ կովեր	429
ոչխարներ և այծեր	120
Խոզեր	33
թռչուններ	2730
մեղվաբնտանիքներ	120

#### 5. Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների մթերատվությունը

Անասնապահական մթերքի տեսակը	2016 թվական
<b>Մթերատվությունը</b>	
Մեկ պայմանական գլուխ խոշորի մթերատվությունը, տոննա	120
1 կովի կաթնատվությունը /լիտր/	1500
1 ոչխարի բրդատվությունը /կգ/	2.6
1 հավի ձվատվությունը /հատ/	150

1 մեղվարնտանիքի մթերատվությունը /կգ/	10.0
<b>Արտադրության ծավալները</b>	
Մսի արտադրություն /տոննա/	65
Կաթի արտադրություն /տոննա/	643500
Բրդի արտադրություն /տոննա/	3.1
Ձվի արտադրություն /հազ. հատ/	409500
Մեղրի արտադրություն /տոննա/	2.2

**6. Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ**

Գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների անվանումը	Չափի միավոր	Քանակը
Թրթուրավոր տրակտոր	հատ	4
Անվավոր տրակտոր	հատ	12
Բեռնատար ավտոմեքենա	հատ	16
Տրակտորային կցասայլ	հատ	12
Գուծան	հատ	10
Կուլտիվատոր	հատ	10
Շարքացան	հատ	4
Կերամանրիչ մեքենա	հատ	1

**1.13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐ**

Համայնքում ներկայումս գործում է քարի մշակման ընդամենը մեկ արտադրամաս:

Համայնքում գործում է առևտրի 2 օբյեկտ, որոնք բավարարում են բնակչության սպառման պահանջները:

Համայնքում գործում են հանրային սննդի և կենցաղային սպասարկման օբյեկտներ:

**1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

Համայնքն ունի 150 աշակերտ/տեղով հանրակրթական մեկ դպրոց, որտեղ ներկայումս սովորում են 67 աշակերտներ:

Դպրոցը կառուցվել է 1979 թվականին:

Դպրոցն ունի 20 մանկավարժ և 6 սպասարկող անձնակազմ, մանկավարժներից 17-ն ունեն բարձրագույն կրթություն, որից 16-ը կանայք են:

Դպրոցի շենքը գտնվում է խիստ վթարային վիճակում: Դպրոցն հիմնականում ապահովված չէ անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և ուսումնա-մեթոդական նյութերով:

**Աշակերտների բաշխումն ըստ դասարանների**

N		Աշակերտների թիվը	Դպրոցում ընդգրկված աշակերտների թիվը ըստ տարիքային խմբերի			
1.	Դպրոցահեն նախակրթարան	32	3-6 տարեկան			
			Տղա		Աղջիկ	
			15		17	
2.	Տարրական դպրոց /1-4-րդ դասարաններ/	77	Մինչև 7 տարեկան		7 տարեկանից բարձր	
			Տղա	Աղջիկ	Տղա	Աղջիկ
			21	22	16	18
3.	Միջին դպրոց /5-9-րդ դասարաններ/	85	Տղա		Աղջիկ	
			33		52	
4.	Ավագ դպրոց /10-12-րդ դասարաններ/	39	Տղա		Աղջիկ	
			19		20	
	Ընդամենը	233				

Անբարեկարգ վիճակում է 120 տեղանոց մանկապարտեզի շենքը և այն չի գործում:

Վերանորոգման և գույքի նորացման կարիք ունի մշակույթի տունը:

Համայնքը չունի հանգստի գոտի կամ այլ հարմարություններ՝ որտեղ հնարավոր կլինի կազմակերպել համայնքի բնակչության հանգիստն ու ազատ ժամանցը, երեխաների մշակութային ու գեղագիտական դաստիարակությունը:

Համայնքն ունի մարզադաշտ, որը վերանորոգման և կառուցապատման կարիք ունի:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է Մարմաշենի, ամբուլատորիայի և համայնքի բուժ. կետի միջոցով, որտեղ աշխատում է 5 բուժբույր: Համայնքի բուժ. կետը մասնակի նորոգվել է 2012 թվականին Հայաստանում ԱՄՆ դեսպանատան <<ՆՈՎԱ>> ծրագրի աջակցությամբ և համայնքի կողմից կատարված ներդրումների շնորհիվ:

**1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ**

- Բերրի վարելահողերի առկայությունը.
- Գյումրի-Ամասիա մայրուղուն մոտ գտնվելը.
- Գազաֆիակցման առկայությունը.
- Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի, բանվորական աշխատուժի առկայությունը.
- քարի արտադրության և մշակման, գյուղատնտեսական մթերքների վերամշակման զարգացման հնարավորությունները:
- Համայնքի բնակչության համախմբվածությունը:

### ***1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ***

- Համայնքի դպրոցի շենքի քայքայվածությունը:
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները:
- 1988 թ. երկրաշարժի հետևանքով համայնքի բնակֆոնդին հասված վնասները:
- Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները:
- Գյուղացիական տնտեսությունների արտադրական փոքր կարողությունները:
- Գյուղատնտեսական տեխնիկայի պակասը, առկա տեխնիկայի մաշվածությունը:
- Ակումբի տան անբավարար վիճակը և գույքի բացակայություն:
- Մանկապարտեզի շենքի բացակայում է:
- Հանգստի գոտու բացակայությունը:
- Գործազրկության բարձր մակարդակը:
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

### ***1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

- Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով գյուղատնտեսական նպատակային վարկերի տրամադրման և սուբսիդավորման միջոցով գյուղատնտեսական տեխնիկայի նորացում, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացում, վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնում:
- Այգեգործության, մեղվապահության և ձկնարդյունաբերության ճյուղերի զարգացում:

### **1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՎՏԱՆՔՆԵՐԸ**

- Համայնքի դպրոցի շենքի քայքայվածությունը:
- Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը:
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն, ուժեղ քամիներ/:
- Ակումբի տան և մանկապարտեզի շենքերի անբավարար վիճակը.
- Բնակչության ցածր կենսապայմանները.
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները և համայնքում ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը:

## **2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

### **2.1. Համայնքի ռազմավարությունն է՝**

Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Գյուղատնտեսության ճյուղի և փոքր ու միջին բիզնեսի զարգացման միջոցով ավելացնել նոր աշխատատեղեր և կանխել արտագաղթը համայնքից:

### **2.2. Հիմնական նպատակները**

- Միջնակարգ դպրոցի հիմնավերանորոգում:
- Խմելու ջրի մատակարարման բարելավում:
- Ակումբի տան հիմնանորոգում:
- Մանկապարտեզի շենքի վերանորոգում:
- Բնակելի տների տանիքների վերանորոգում:
- Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում:
- Դաշտամիջյան ճանապարհների փոսալցում:
- Կոյուղու ցանցի վերանորոգում:

- Գյուղացիական տնտեսությունների կարողությունների զարգացում:
- Գյուղատնտեսական տեխնիկայի նորացում:
- Համայնքում գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնում, նոր աշխատատեղերի ստեղծում:
- Քարի արտադրության և վերամշակման ճյուղի զարգացում, նոր աշխատատեղերի ստեղծում:
- Անհատական բնակարանային շինարարության խթանում:
- Համայնքի մշակութային կյանքի աշխուժացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում:
- Համայնքում հանգստի գոտու հիմնում:
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության կազմակերպում:

### **3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

#### ***3.1. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ***

Համայնքում ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքհարկից և վարձակալության տրված համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարներից: Վերջին 10 տարիներին համայնքի բյուջեի սեփական եկամուտները կատարվել են 80-100 տոկոսով: Բյուջեի մուտքերի հիմնական մասը նպատակաուղղվել են ընթացիկ աշխատավարձերի ու սոցիալական ապահովության պարտադիր վճարների վճարմանը, իսկելու ջրի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների կատարմանը, ոռոգման ցանցի մասնակի վերանորոգմանը, բնակավայր մտնող և միջհամայնքային ճանապարհների փոսային նորոգմանը, փոքրածավալ ծառայությունների մատուցմանը /աղբահանության կազմակերպում, փողոցների լուսավորության ցանցի վերականգնում, ցանցի սպասարկում և այլն/, սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնությունների տրամադրմանը, և այլ ծրագրերի իրականացման համար համայնքից պահանջված ներդրումների կատարմանը, տեղական

ինքնակառավարման մարմինների գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

Համայնքի բյուջեի ֆինանսական կարողությունները հնարավորություն չեն տալիս լուծելու համայնքում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: Այդ հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է պետական մարմինների, հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

Համայնքը պատրաստակամ է բաժնեմասային /համաֆինանսավորման/ կարգով մասնակցություն ունենալ այլ կազմակերպությունների կողմից իրականացվող կապիտալ ծախսային ծրագրերին, որի համար համաֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի բյուջեի սեփական միջոցները, համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների օտարումից ստացվող միջոցները, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից կատարվող ներդրումները:

**3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆՆԱՏԵՍՈՒՄ**

*Հազ. դրամ*

Հ/հ	Եկամուտի տեսակը	2016թ. փաստացի կատարված	2017թ. նախատեսված	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում.
	Եկամուտներ, ընդհամենը	50250.8	46896.8	47392.2	49579.2	51579.2
Ա	Հարկային եկամուտներ	12539.8	12675.1	12675.1	12675.1	12675.1
1	Հողի հարկ	6229.1	6252.6	6252.6	8252.6	10252.6
2	Գույքահարկ	6235.7	6422.5	6422.5	6422.5	6422.5
3	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր	75.0	150.0	150.0	200.0	200.0
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	75.0	150.0	150.0	200.0	200.0
	Ոչ հարկային եկամուտներ					
1	Համայնքայի սեփ. հողերի վարձավճարներ	1328.8	945.6	1328.0	1528.0	1528.0
2	Գույքի վարձավճարներ					
3	Տեղական վճարներ	520.0	480.0	480.0	480.0	480.0
4	Այլ ոչ հարկային եկամուտներ			50.0	50.0	50.0
Գ	Պաշտոնական տրանսֆերտներ, դոտացիա	32646.1	32646.1	32646.1	32646.1	32646.1
Դ	Եկամուտներ, կապիտալի գործառնություններից					



Ե	Տարեակգրի ազատ մնացորդ	26.0				
Զ	Ֆոնդային բյուջե	3216.4				
	Բյուջեի կատարում/տոկոս/	93.7	93	97.1	97.1	97.1

### **3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Տարածաշրջանին բնորոշ բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների /կարկտահարություն, երաշտ, ցրտահարություն/, ոռոգման համակարգի քայքայվածության և ոռոգելի հողատարածքների պակասի, համայնքի բնակչության սոցիալական վատ պայմանների, ինչպես նաև համայնքից տևական ժամանակ բացակայող ընտանիքների կողմից հարկային պարտավորությունները չկատարելու հետևանքով, սեփական եկամուտների գծով համայնքում կուտակվել են շուրջ 4488.4 հազար դրամի ապառքներ, որից հողի հարկի գծով՝ 1866.1 հազար դրամ, գույքահարկի գծով՝ 2022.3 հազար դրամ և հողերի վարձակալական վճարների գծով՝ 600 000 հազար դրամ: Ձեռնարկված միջոցառումների և «Հողի հարկի և գույքահարկի արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքի կիրարկման արդյունքում վերջին 3 տարիների ընթացքում հնարավոր է եղել հավաքագրել մոտ 0.0 հազար դրամ ապառքներ:

Հողի հարկի և գույքահարկի ապառքների 40 տոկոսը անհուսալի են և պատկանում են հողի այն սեփականատերերին, ովքեր շուրջ 10 և ավելի տարիներ ընտանիքով բացակայում են հանրապետությունից, իսկ նրանց հողերը կամ չեն մշակվում կամ առանց համապատասխան պայմանագրի ու պետական գրանցման օգտագործվում են հողի սեփականատերերի հարազատների ու մտերիմների կողմից: Գյուղապետարանը իրավական հիմքեր չունի նշված ապառքները դատական կարգով հողի փաստացի օգտագործողներից գանձելու համար, իսկ աշխատանքի բերումով արտերկրներում հայտնված համայնքի անդամներին հողի սեփականությունից զրկելը համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները հարցի լուծման իրատեսական տարբերակ չեն համարում:

01.01.2016թ. դրությամբ համայնքը աշխատավարձի, սոցիալական ապահովության վճարների գծով ապառքներ չունի:

**3.4. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Հազ. դրամ

Ապառքի տեսակը	Ապառքը առ. 01.01.17թ. դրությամբ	Ապառքների հավաքման կանխատեսում				Անհուսալի ապառքներ
		2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	
Հողի հարկ	10663.3	10663.3	10663.3	8100	6100.0	40%
Գույքահարկ	6000.0	6000.0	6000.0	6000.0	6000.0	
Հողի վարձավճար		600.0	400.0	400.0	0.0	

**3.5. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ**

N	Ծրագրի անվանումը	Իրականացնող կազմակերպությունը	Ծրագրի ընդհանուր բյուջեն	Այդ թվում		Իրականացման տարեթիվը
				Դոնոր կազմակերպ.	Համայնքի ներդրում	
1.	Բուժ. կետի վերանորոգում	ԱՄՆ դեսպանատուն Համայնք	3400.0 հազ.դրամ	2300 հազ.դրամ	1100 հազ.դրամ	2012թ.
3.	Ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգում	Համայնք	6 000.0 հազ դրամ	0.0	6 000.0 հազ դրամ	2005թթ.
4.	Փողոցների գիշերային ցանցի կառուցում	Համայնք	2 000.0 հազ. դրամ	0.0	2 000.0 հազ. դրամ	2012թ.

**3.6. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱՔՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

N	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը /հազ. դրամ/	Դոնոր կազմակերպության ներդրում /հազ. դրամ/	Համայնքի ներդրում /հազ. դրամ/	Կատարման ժամկետը /հազ. դրամ/
1.	<i>ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի համայնքի խմելու ջրի ցանցի մասնակի հիմնավերանորոգում</i>	20 000 000	0.0	2 000 000	2017-2018թթ.
2.	<i>Մարմաշեն համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգում /խճապատում/</i>	800 000	0.0	Համայնքի բյուջե 800 000	2017թթ.
3.	<i>Մարմաշեն համայնքի ակումբի շենքի վերանորոգում ներառյալ գրադարանի սենյակը, դահլիճը, մեծահասակների խաղասենյակը</i>	5 000 000	0.0	Համայնքի բյուջե 5 000 000	2018-2020թթ.

**4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ**

Ըստ առանձին բնագավառների ծրագրերի ընտրության և նրանց առաջնահերթության որոշման համար հիմք են հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը և նամայնքի ղեկավարի նախընտրական քարոզարշավի ժամանակ համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները:

Իսկ ծրագրերի իրականացման, արժեքների գնահատման և հնարավոր ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար հիմք են հանդիսացել տեղական բյուջեի ֆինանսական հնարավորությունները, ՀՀ կառավարության տարածքային զարգացման ռազմավարությունը և հանրապետությունում գործող ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ հաստատած համագործակցության կապերը:

2017- 2021թթ. նախատեսվում է իրականացնել առաջնահերթ լուծում պահանջող հետևյալ ծրարերը՝

## Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 1

### **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

**Խմելու ջրի ցանցի մասնակի նորոգում (գ. Մարմաշեն)**  
(Ծրագրի անվանումը)

**Բնակարանային շինարարություն և կոմունալ տնտեսություն (ջրամատակարարում)**  
(Ոլորտի անվանումը)

**Մարմաշենի համայնքապետարան**  
(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 20 000.0 հազար դրամ**

**Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝**

✓ Վերանորոգում

**Ծրագրի հիմնավորումը**

Մարմաշեն բնակավայրում խմելու ջրի ներքին ցանցը քայքայված վիճակում է, ինչը պատճառ է դառնում ջրամատակարարման անընդհատ խափանումների և ջրի՝ մեծ ծավալով կորուստների:

**Ծրագրի նպատակները**

*1. Նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացմանը՝ բարելավելով խմելու ջրի ջրամատակարարման ծառայությունների որակը:*

**Ծրագրի խնդիրները**

- ✓ Նախապատրաստել խմելու ջրի ցանցի նորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- ✓ Հայտարարել մրցույթ և ընտրել կապալառուին
- ✓ Իրականացնել խմելու ջրի ցանցի նորոգման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել խմելու ջրի ցանցի նորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտը

**Ծրագրի ակնկալվող արդյունքները**

Խմելու ջրի ցանցի նորոգման արդյունքում կունենանք վերանորոգված ենթակառուցվածք՝ խմելու ջրի ներքին ցանց:

Խմելու ջրի ցանցի նորոգման արդյունքում կբարելավվի մարդկանց կենսամակարդակը, համայնքը հնարավորություն կունենա մատուցել որակյալ ծառայություն: Ցանցի նորոգումը խթան կհանդիսանա, որպեսզի բնակավայրում գործող հյուրատները, հյուրանոցները, հանրային սնունդ սպասարկող օբյեկտները, ինչպես նաև նոր նախաձեռնություններ և զբոսաշրջային ենթակառուցվածքներ ստեղծողները ունենան ծախսերի զգալի կրճատում ու մատուցեն ավելի որակյալ ծառայություններ:

## **Ծրագրի բյուջեն**

### **ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրները**

Խմելու ջրի ցանցի նորոգման ծրագրի իրականացման ծախսերը՝ 20 000.0 հազար դրամ, ֆինանսավորվելու է համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

### **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2017-2018թվականներին:

### **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**

Կապսի համայնքի ղեկավար՝ Աշոտ Եղոյան:

### **ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝**

Համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

## **Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 2**

### **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

**Ֆուտբոլի դաշտի վերանորոգում (գ. Մարմաշեն)**

(Ծրագրի անվանումը)

**Հանգիստ, մշակույթ և կրոն**

(Ոլորտի անվանումը)

**Մարմաշենի համայնքապետարան**

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 2 500 000 հազար դրամ**

**Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝**

## **Ծրագրի նպատակները**

*1. Ունենալ գործող բարեկարգ սպորտային ենթակառուցվածք:*

Նախատեսվում է ցանկապատել նախանշված տարածքը, հարթեցնել և ցանել համապատասխան խոտի սերմ, բարեկարգել:

## **Ծրագրի խնդիրները**

- ✓ Հաշվարկել ֆուտբոլի դաշտի վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի քանակներն ու ծավալները
- ✓ Գնահարցման կամ հայտարարության միջոցով ձեռք բերել համապատասխան նյութերը
- ✓ Իրականացնել ֆուտբոլի դաշտի վերանորոգման աշխատանքները

## **Ծրագրի ակնկալվող արդյունքները**

Ֆուտբոլի դաշտի վերանորոգման ծրագրի իրականացման արդյունքում կունենանք գործող բարեկարգ սպորտային ենթակառուցվածք: Կառուցված ֆուտբոլի դաշտում հնարավոր կլինի կազմակերպել և անցկացնել միջբնակավայրային մրցաշարեր: Ֆուտբոլի դաշտը կծառայի նաև հարակից համայնքի բնակիչներին:

## **Ծրագրերի բյուջեն**

### **ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրները**

Ֆուտբոլի դաշտի վերանորոգման ծրագրի իրականացման ծախսերը՝ 1 500.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

## **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2019-2021 թվականներին:

## **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**

Մարմաշեն ի համայնքի ղեկավար՝ Աշոտ Եղոյան:

## **ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝**

Համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

## **Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 3**

## **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

**Հանդիսությունների սրահի կառուցում (գ. Մարմաշեն)**  
(Ծրագրի անվանումը)

**Հանգիստ, մշակույթ և կրոն**  
(Ոլորտի անվանումը)

**Մարմաշենի համայնքապետարան**  
(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 22 000.0 հազար դրամ**  
**Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝**

✓ Վերանորոգում

### **Ծրագրի հիմնավորումը**

Մարմաշեն համայնքում հանդիսությունների սրահը գտնվում է անմխիթար վիճակում: Դա միջոցառումների և արարողությունների ժամանակ անհարմարություններ է առաջացնում բնակչության և հյուրերի համար: Որպես մեծ հավաքույթների օջախ, նշված կառույցը միակն է Մարմաշեն համայնքում, ուստի խիստ անհրաժեշտություն կա այն վերանորոգելու և պահպանելու:

### **Ծրագրի նպատակները**

*1. Ստեղծել համայնքում հանդիսություններ կազմակերպելու բավարար պայմաններ:*

### **Ծրագրի խնդիրները**

- ✓ Նախապատրաստել հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- ✓ Իրականացնել հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտը

### **Ծրագրի ակնկալվող արդյունքները**

Հանդիսությունների սրահի վերանորոգման արդյունքում կունենանք վերանորոգված ենթակառուցվածք: Հանդիսությունների սրահի վերանորոգումը թույլ կտա հարսանանիքներն ու այլ միջոցառումները կազմակերպել ավելի բարձր մակարդակով, և մարդիկ ստիպված չեն լինի ավելի շատ ծախսեր կատարելով՝ իրենց միջոցառումները տեղափոխել այլ բնակավայրեր կամ համայնքներ:

### **Ծրագրի բյուջեն**

#### **ա/ ծրագրի ֆինանսավորման աղբյուրները**

Հանդիսությունների սրահի վերանորոգման ծրագրի իրականացման ծախսերը՝ ընդհանուրը 2 000.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

### **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2018-2019 թվականներին:

### **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՄ**

Մարմաշենի համայնքի ղեկավար՝ Աշոտ Եղոյան:

## **ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝**

Համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

### **Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 4**

#### **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

**Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում /խճապատում/ (գ. Մարմաշեն)**  
(Ծրագրերի անվանումը)

**Տնտեսական հարաբերություններ (ճանապարհաշինություն)**  
(Ոլորտի անվանումը)

**Մարմաշենի համայնքապետարան**  
(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրերի ընդհանուր արժեքը՝ 800 .0 հազար դրամ**

#### **Ծրագրերի տեսակը կամ գնվող ապրանքը**

✓ Ընթացիկ աշխատանքներ

#### **Ծրագրերի հիմնավորումը**

Մարմաշեն համայնքում առկա 8կմ ներհամայնքային ճանապարհները գտնվում են անմխիթար վիճակում: Ներհամայնքային ճանապարհների վատթար վիճակը խոչընդոտ է հանդիսանում նաև գյուղատնտեսական աշխատանքները կատարելուց:

#### **Ծրագրերի նպատակները**

1. *Համայնքում ունենալ հարթ և բարեկարգված ներհամայնքային ճանապարհներ՝ դրանով իսկ բարձրացնելով բնակչության կենսամակարդակ:*

#### **Ծրագրերի խնդիրները**

- ✓ Համայնքի տարածքում (առանց բնությանը վնասելու) գտնել բավարարաչափ հողի և խեճի պաշարներ
- ✓ Աշխատանքներն իրականացնելու համար ձեռք բերել բավարարաչափ տրանսպորտային նյութեր (դիզ. վառելիք)
- ✓ Կազմակերպել հողի և խեճի տեղափոխման ու ճանապարհների հարթեցման աշխատանքները



## **Ծրագրերի ակնկալվող արդյունքները**

Ծրագրերի իրականացման արդյունքում համայնքը կունենանք հարթ և բարեկարգ ճանապարհներ, ինչը կնպաստի բնակչության բարեկեցության:

## **Ծրագրերի բյուջեն**

### **ա/ ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները**

Ծրագրերի իրականացման ծախսերը՝ ընդհանուր 800.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

## **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2017 թվականին:

## **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**

Մարմաշենիի համայնքի ղեկավար՝ Աշոտ Եղոյան:

## **ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝**

Համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

## **Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 5**

### **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

**Ակումբի շենքի վերանորոգում (գ. Մարմաշեն)**

(Ծրագրի անվանումը)

**Հանգիստ, մշակույթ և կրոն**

(Ոլորտի անվանումը)

**Մարմաշենիի համայնքապետարան**

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 5 000.0 հազար դրամ**

**Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝**

✓ Վերանորոգում

### **Ծրագրի հիմնավորումը**

Մարմաշեն համայնքի ակումբի շենքում չկան վերանորոգված սենյակներ, որի պատճառով հնարավոր չէ բնակավայրում երեխաների և երիտասարդների համար

կազմակերպել որևէ մշակութային խմբակ: Մարմաշեն համայնքում բնակչությունը չունի առօրյա հոգսերից և գործերից կտրվելու, ազատ ժամերին հանգստանալու համար նախատեսված վայր:

### **Ծրագրի նպատակները**

1. Մշակութային խմբակների գործունեության և մշակույթի ոլորտում բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման հնարավորությունների ստեղծում:
2. Հնարավորություն ստեղծել Մարմաշեն համայնքում բնակչության հանգիստը հաճելի կազմակերպելու համար:  
Նախատեսվում է վերանորոգել մեծահասակների խաղասենյակի տարածքը և համալրել համապատասխան գույքով (նարդի, շախմատ և այլն):

### **Ծրագրի խնդիրները**

- ✓ Նախապատրաստել ակումբի շենքի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը
- ✓ Իրականացնել ակումբի շենքի վերանորոգման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել մշակույթի տան շենքի վերանորոգման աշխատանքների կատարման ավարտական ակտը

### **Ծրագրի ակնկալվող արդյունքները**

- Մարմաշեն համայնքի մշակույթի տան վերանորոգման արդյունքում.
- ✓ բնակավայրում կստեղծվի երեխաների և երիտասարդների մշակութային կյանքը ակտիվացնելու հնարավորություն,
  - ✓ բնակչությանը որակյալ վարչական ծառայություններ հնարավորություն:

### **Ծրագրի բյուջեն**

#### **Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները**

Ակումբի տան մասնակի վերանորոգման ծրագրի իրականացման ծախսերը՝ ընդհանուրը 55 000.0 հազար դրամ, ֆինանսավորվելու են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

### **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2018-2020 թվականներին:

**ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝**

Մարմաշենի համայնքի ղեկավար՝ Աշոտ Եղոյան:

**ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝**

Համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

**5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

N	Ցուցանիշի անվանումը	Չափի միանոր	2016թ. փաստացի	2017թ. կանխատեսում	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում
1	2	3	4	5	6	7	8
1	Համայնքի տարածքը	հա	1400.7	1400.7	1400.7	1400.7	1400.7
2	Բնակչության թիվը	մարդ					
3	Տն. տնտեսությունների թիվը	ընտ.	604	608	610	615	630
4	Ծնունդը		21	27	35	40	45
5	Մահացությունը	մարդ	17	17	18	15	15
6	Աշխատունակ բնակչություն	մարդ					
7	Զբաղվածները ընդամենը այդ թվում՝ ըստ տնտեսության ճյուղերի՝	մարդ	1900	1920	1880	1920	1950
	ա/ գյուղատնտեսություն /թերի բեռնվածությամբ/	մարդ	1900	1920	1940	1945	1945
	բ/արդյունաբերություն	մարդ	6	4	7	7	5
	գ/շինարարություն	մարդ	-	-	-	-	-
	բ/ ծառայությունների ոլորտ.	մարդ	37	37	39	40	45
	դ/այլ ոլորտներ	մարդ	23	24	19	19	17
8	Գործազրկության մակարդակը	%	256	258	258	259	261
9	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	2	2	2	2	2
10	Համայնքային սեփականության վարելահողեր	հա	439.4	439.4	437.4	439.4	439.4
11	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%	40	40	55	50	60
12	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկայնությունը	կմ	8	8	8	8	8
13	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	6	6	6	6	6
14	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	725.0	725.0	725.0	725.0	725.0
15	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	8	8	8	8	8
16	Զբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	2	2	1.5	1	0.5
17	Ընդամենը բնակ -ֆոնդ այդ թվում՝	հատ/ ք.մ	16220	16220	16220	16220	16220

	<b>-Մասնավոր բնակ. ֆոնդ</b>	հատ ք.մ	16220	16220	16220	16220	16220
18	<b>Բնակարանի կարիքավոր ընտանիքերի թիվը</b>	հատ	32	30	29	35	37
19	<b>Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը</b>	լիտր/ օր	12	11	10	13	13
20	<b>Ջրի կորուստները ցանցում</b>	%					
21	<b>Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում</b>	մարդ	211	215	220	238	210
22	<b>Երեխաների թիվը մանկապարտեզում</b>	մարդ	56	65	70	75	80
23	<b>Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը</b>	մարդ	15	16	20	22	26